«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝	Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման նախադրյալները
Առարկան՝	Հայոց եկեղեցու պատմություն
Հետազոտող ուսուցիչ՝	Գոհար Հարությունյան
Ուսումնական հաստատություն՝	Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց

«Երևան 2023»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՔԵՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ **(301թ.)** 9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԱԽԱԲԱՆ

Երբ թերթում ենք Հայոց եկեղեցու պատմության էջերը, մենք մեզ հզոր ենք զգում, հպարտ ու լավատես մեր անցյալի, մեր ներկայի համար և հույսով ու հավատով ենք նայում ապագային: Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին 301 թվականից սկսած դարձավ համայն հայության անառիկ ամրոցը:

Պատմությունն ավելի է, քան պարզապես շարադրանքն անցյալի դեպքերի և իրադարձությունների: Այն օրից, երբ Հայկ նահապետը փշրեց բռնության շղթաները և հայի համար հայրենի հողի սահմանը հաստատեց, հայոց սրտում դրոշմվեց ազատ ապրելու կնիքը:

Ազատասեր այս զգացումով հայ ժողովուրդը ընդունեց քրիստոնեությունը՝ մարդկությանը շնորհված մեծագույն ազատությունը՝ դարձը դեպի Աստված:

Քրիստոնեությունը, որպես համաշխարհային, համամարդկային կրոն, որպես գաղափարաարժեքային համակարգ և վարդապետություն, ձևավորումից հետո դարձել է քրիստոնեական ազգերի զարգացման անկապտելի մասը, իսկ հաճախ նա հասարակական և ազգային գիտակցության առանցքն ու հենքը: Քրիստոնեությունն առանձնահատուկ դեր է խաղացել Հայոց պատմության մեջ, ինչն անխզելիորեն կապված է Հայ առաքելական եկեղեցու հետ: Հայոց եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ ժողովրդի ազգային նկարագրի անբաժանելի մասը: Հարկավոր է շեշտել, որ ոչ միայն հայերի, այլ ողջ քրիստոնյա աշխարհի համար կարևորագույն պատմական փաստ է 301 թվականին քրիստոնեությունը աշխարհում առաջինը պետականորեն ընդունելը:

Քրիստոնեության ընդունման նախադրյալները

226թ. Պարսկաստանում տեղի են ունենում քաղաքական մեծ փոփոխություններ:

Պարթև Արշակունիները գահընկեց են արվում, և գահ են բարձրանում Սասանյան հարստության ներկայացուցիչները: Սասանյանները վաղուց զբաղեցնում էին Պարսկաստանի քրմապետի պաշտոնը և տիրելով գահին՝ նրանք պետական կրոն են հռչակում զրադաշտականությունը:

Այդ իրադարձությունները չէին կարող չանդրադառնալ հայ-պարսկական հարաբերությունների վրա: Չնայած՝ դեպքերը զարգանում էին հայոց երկրից դուրս, հարևան մի երկրում, և, թվում էր ոչ մի դեր չպիտի խաղային հայ ժողովրդի կյանքում: Սակայն իրականում ճակատագրական նշանակություն ունեցան հաերի համար, որովհետև, երբ պարսիկ Արշակունիների տոհմակիցներն էին հայոց գահի տիրակալները, ապա երկու երկրներն էլ տնականորեն, դարեր շարունակ ապրում էին համարյա առանց քաղաքական մեծ բախումների: Մինչդեռ Սասանյանները, բուն Պարսկաստանում Արշակունիներին վերացնելով, նույնը պիտի անեին նաև Հայաստանում, որովհետև հարևան այդ երկրի վրա իրենց քաղաքական ու տնտեսական ազդեցությունը ծանրացնելու այլ մի ճանապարհ չկար:

Եվ Պարսկաստանի նախկին դաշնակից Հայաստանը այժմ դառնում է նրա գլխավոր հակառակորդներից մեկը, քանի որ Հայաստանում իշում էր Արշակունիների հայկական ճյուղը:

Իրադրությունն է՛լ ավելի է բարդանում որոշ հայ նախարարների երկպառակտչական գործունեության պատճառով: Եվ այստեղից էլ ծայր առավ արյունոտ այն դրաման, որի երկուհարյուրամյա դաժան խաղարկումի վերջին տեսարանն էր լինելու Հայոց թագավորական հարստության և քաղաքական անկախության վերացումը:

Երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար անհրաժեշտ էր համախմբել հայ ժողովրդին:

Հեթանոսությունը, դարեր շարունակ իր վրա կրելով հունահռոմեական և պարսկական կրոնների ազդեցությունը, չէր կարող լուծել այդ խնդիրը:

Հայ Արշակունիներն իրենց հայացքն ուղղում են դեպի քրիստոնեությունը, որը 3-րդ դարի վերջին Հայաստանում արդեն ուներ մեծաքանակ հետևորդներ: Քրիստոնյաները բոլորին զարմացնում էին իրենց անսասան հավատքով: Նրանք նույնիսկ պատրաստ էին հրաժարվել կյանքից, բայց ոչ հավատքից:

Քրիստոնեական համայնքների տարածումը Հայաստանում

Հայոց եկեղեցու պատմությունը սկզիբ է առնում Քրիստոսի ժամանակներից կամ, ինչպես ընդունված է ասել առաքելական քարոզչության տարիներից: Այդ մասին ավանդություններ են պահպանվել ասորական և հունական հնագույն աղբյուրներում: Դրանք որպես սրբազան ավանդություն տարածվել են հայերի մեջ և բանավոր տարածվել ու փոխանցվել սերնդից սերունդ, իսկ 5-րդ դարում՝ հայոց գրերի գյուտից հետո, գրի առնվել:

Ըստ այդ ավանդության՝ Հայաստանում քրիստոնեությունը առաջին անգամ քարոզել են Հիսուս Քրիստոսի աշակերտներ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները:

Թադեոս առաքյալը գնում է Հյուսիսային Միջագետք՝ Եդեսիա փոքրիկ թագավորություն, որտեղ իշում էր Աբգար թագավորը: Ըստ ավանդության՝ առաքյալը բժշկում է հիվանդ թագավորին, քարոզում Հիսուսի պատվիրանները:

Մովսես Խորենացին գրում է, որ Եդեսիայի բնակիչների մեծ մասը, այդ թվում Աբգար թագավորը և պալատականներից շատերը, դառնում են քրսիտոնյա:

Եդեսիայում Թադեոսը հիմնում է եպիսկոպոսական աթոռ, ձեռնադրում հոգևորականներ: Այնուհետև նա անցնում է Մեծ Հայքի թագավորություն: Թադեոս առաքյալն առաջինն էր, որ Հայաստան եկավ՝ քարոզելու Քրսիտոսի ուսմունքը, և այդ է պատճառը, որ Հայոց հայարպետական աթոռը կոչվում է նաև Աթոռ Թադեի:

Նա հատկապես լայն գործունեություն է ծավալում Արտազ գավառում, որտեղ գտնվում էր հայոց Սանատրուկ թագավորի ամառային նստավայրը: Թադեոսի քարոզների շնորհիվ քրսիտոնյա են դառնում Սանդուխտ արքայադուստրը, ազնվականների մի մասը, Հայաստանում շատերը թշնամաբար են ընդունում քրիստոնեության տարածումը և հալածանքներ սկսում նորադարձ քրիստոնյաների նկատմամբ: Սանատրուկը չի խնայում և մահվան է դատապարտում նույնիսկ սեփական դստերը՝ Սանդուխտին:

Որոշ ժամանակ անց սոսկալի տանջանքների ենթարկելով մահապատժի են ենթարկում նաև Թադեոս առաքյալին:

Թադեոս առաքյալի գործունեության տարիներին Հայաստան է գալիս Հիսուսի 12 աշակերտներից ևս մեկը՝ Բարդուղիմեոս առաքյալը: Մինչ այդ նա քարոզել էր Պարսկաստանում, հասել Հնդկաստան:

Հայաստանում առաքյալի քարոզչության հիմնական վայրերից է դառնում Սյունյաց նահանգը: Գողթն գավառում նա կառուցում է եկեղեցի, հիմնում եպիսկոպոսական աթոռ, եպիսկոպոս ձեռնադրում իր աշակերտներից Կումսիին:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ մի անգամ Հայաստանի տարբեր գավառներով շրջելիս Արտաշատի մոտ միմյանց են հանդիպում Բարդուղիմեոս և Թադեոս առաքյալները: Օթյաց Խաչ կոչվող վայրում գիշերելուց հետո նրանք կրկին բաժանվում են:

Բարդուղիմեոսը քարոզում է Հեր և Զարևանդ գավառներում: Հետևելով առաքյալին՝ քրիստոնյա է դառնում նաև Սանատրուկի քույր Ոգուհին: Քրիստոնեությունը հալածող թագավորի հրամանով Բարդուղիմեոս առաքյալը և Ոգուհին ձերբակալվում և բազմաթիվ չարչարանքներից հետո մահապատժի են ենթարկվում:

Բարդուղիմեոս առաքյալը Գողթնի եպիսկոպոսական աթոռը հիմնադրել է Շաբ իշխանի և Նշնա իշխանուհու խնդրանքով: Ստեփանոս Օրբելյանը «պատմություն նահանգին Սիսական» աշխատության մեջ հիշատակում է Կումսիին հաջորդած Բաբելաս Խուժիկի և Մուշեի անունները: Ըստ ավանդության՝ Սյունյաց աթոռի առաջին եպիսկոպոսները Բարդուղիմեոսին ուղեկցող պարսիկներից են եղել:

Պահպանվել է 649թ. կազմված Արտազի եպիսկոպոոական աթոռի հնագույն մի գավազանագիրք, որից տեղեկանում ենք, որ Թադեոս առաքյալը Արտազում հիմնեց եպիսկոպոսական աթոռ և իր աշակերտ Զաքարիային ձեռնադրեց եպիսկոպոս: Գավազանագրքում հիշատակվում են Արտազի աթոռին Զաքարիային հաջորդած ևս մի քանի եպիսկոպոսների աթոռներ՝

Զաքարիա – 70-71

Զեմենտոս – 71-75

Ատրներսեհ – 76-91

Մուշե – 92-122

Շահեն – 123-148

Շավարշ – 149-169

Ղևոնդիոս – 169/179 – 186/187

Հայոց եկեղեցին իր Տոնացույցում նահատակված շատ մարտիրոսների անուններ ունի: Դրանցից է Ոսկյանք վկաների ավանդությունը:

Թադեոս առաքյալի քարոզչության տարիներին Հռոմի կայսեր կողմից որպես պատգամավորներ Հայաստան են գալիս հինգ արքայազուն իշխաններ: Լսելով առաքյալի քարոզները և տեսնելով գործած հրաշքները՝ նրանք քրիստոնյա են դառնում: Խումբը Ոսկյանք կոչվեց նրանց առաջնորդ՝ Խրյուսի անունից, որ թարգմանաբար նշանակում է ոսկի:

Թադեոս առաքյալի մահից հետո նրանք առանձնացել են Ծաղկոտն լեռներում և ճգնակյաց կյանք վարել: Ոսկյանց քարոզների շնորհիվ քրիստոնեություն են ընդունել մի խումբ ազնվականներ, որոնք հեռանալով հայոց թագավորի պալատից, բնակություն են հաստատել լեռներում: Այս նորադարձ ալան ազնվականներին նա անվանվեց Սուքիաս: Այդ պատճառով խումբը ստացավ Սուքիասյանի անվանումը:

Արդեն 3-րդ դարի կեսերին Մեծ Հայքում գոյություն ուներ լավ կազմակերպված և ճանաչում գտած եկեղեցի:

Փոքր Հայքում 1-3-րդ դարերում նույնպես գործել են բազմաթիվ քրիստոնեական համայնքներ իրենց եպիսկոպոսներով, քահանաներով, սարկավագներով:

ՔԵՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ (301թ.)

Հին հայ գրականության մեծագույն մասն են կազմում այն մատյանները, որոնց շապիկները զարդարում է «Պատմություն Հայոց» խորագիրը: Այդ մատյանների շարքում էլ լավագության պատիվը պատկանում է Ագաթանգեղոսի երկին, որի համար, առանց երկբայության, հիմք է ծառայել մի ժամանակագրություն՝ գրված իրողությունների ականատեսի ձեռքով:

«Ագաթանգեղոս» հունարեն բառ է, որը նշանակում է «Բարի լուր ավետող» (ագաթո-բարի լուր անգելոս-հրեշտակ): Որոշ հեղինակներ կարծում են, որ Ագաթանգեղոսը ոչ թե գրքի հեղինակի անունն է, այլ պատմության գլխավոր հերոս Գրիգոր Լուսավորչի մականունը: Սակայն հայտնի է, որ 5-րդ դարի մեր պատմիչներից՝ Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, այս մատյանը գիտեին իբրև «Պատմություն հայոց» և նրա հեղինակ էին ճանաչում հենց իրեն՝ Ագաթանգեղոսին, չնայած հաստատ գիտերին նաև, որ այդ պատմության առանցքն են կազմում Գրիգոր Լուսավորչի վարքն ու հայոց քրիստոնեության դպրոցը: Մեզ հասած Պատմության բուն նյութի շարադրանքն սկսվում է Սասանյան Արտաշիրի կողմից Պարթև Վաղարշի որդի Արտավանի սպանությամբ և ավարտվում հայոց քրիստոնեության դարձած բնագրի հիմնական մասը նվիրված է Գրիգոր Լուսավորչի կյանքի ու հավատանպաստ գործի նկարագրությանը և բնական է նաև մատյանի երկրորդ անունը՝ Գրիվորսի գիրք, որի մասին տեղեկացնում է Ղազար Փարպեցին:

Արտաշիր Սասանյանի ձեռքով Պարսից գահից զրկվում, ապա սպանվում է Արտավան Արշակունին: Հայոց թագավոր Խոսրովը, իր տոհմակցի մահվան համար վրիժառությամբ լցված, 10 տարի շարունակ, հաջող մարտեր է մղում Սասանյան Արտաշիրի դեմ, և Արտաշիրն այդ ամենին վերջ տալու նպատակով Հայաստան է ուղարկում Անակ Պարթևին, որը գալիս և դավադրաբար սպանում է Խոսրով թագավորին: Հայերը կոտորում են չարագործի ամբողջ տոհմը, որից փրկված միակ ներկայացուցչին՝ Անակի մանկահասակ որդի Սուրենին փոխանցում են Կեսարիա՝ հանձնելով դաստիարակների խնամքին, որոնք նրան մկրտում և վերանվանում են

Գրիգոր: Իսկ անթագավոր մնացած Հայաստանում ասպատակ է փռում Արտաշես Սասանյանը: Նա ոչնչացնել է տալիս Խոսրովի տոհմը, որից փրկվում է Տրդատ մանուկը՝ Խոսրովի որդին: Հայոց նախարարները Տրդատին հասցնում են հռոմեյացոց երկիրը, ուր նա մեծանում է, դառնում քաջ զորական ու հնարամիտ քաղաքական գործիչ: Գոթերի դեմ մղած ճակատամարտում խիզախ մենամարտ է ելնում նրանց թագավորի դեմ և փրկում Դիոկղետիանոս կայսրին:

Այսօրինակ քաջագործություններով իր վրա քաղցրացնում է կայսրության աչքը, ապա նրա զորքերի բազմությունն առած՝ գալիս Հայաստանը մաքրում է պարսիկ բռնավորից, դառնում հայրենի գահի տնօրեն (287թ.):

Ճանապարհին՝ Կեսարիայում, նա ծանոթանում է Գրիգորի հետ և հիանալով նրա խելքով ու իմաստությամբ՝ նշանակում է արքունի քարտուղար: Տրդատին միանում են բազմաթիվ հայկական ջոկատներ: Հայ-հռոմեական միացյալ ուժերը մի շարք հաղթանակներ են տանում պարսիկների դեմ: Ի նշան տարած հաղթանակների՝ Տրդատը Եղեաց գավառի Երիզա ավանում մեծ հանդիսություններ է կազմակերպել նվիրված հեթանոսական աստվածուհուն ուղեկցող շքախումբը ծաղկեպսակներ և զոհեր են մատուցում Անահիտ դիցուհուն: Միայն Գրիգորը, որը քրիստոնյա էր, հրաժարվում է զոհեր մատուցել հեթանոս աստվածուհուն: Արքային վշտացնում է իր սիրելի քարտուղարի քրիստոնյա լինելը: Նա տարբեր միջոցներով փորձում է «դարձի բերել» Գրիգորին: Բայց վերջինս մնում է անդրդվելի: Արքան հրամայում է ծանր տանջանքների ենթարկել նրան: Շուտով Տրդատին հայտնի է դառնում, որ Գրիգորը դավադիր Սահակ Պարթևի որդին է: Զայրացած արքան հրամայում է նրան նետել մահապարտների համար Արտաշատում կառուցված Խոր Վիրապ բանտը: Ըստ Ագաթանգեղոսի պատմության Գրիգորը Խոր Վիրապում մնաց 13 տարի:

Նույն ավանդությունը պատմում է, որ այդ տարիներին մի քանի տասնյակ քրիստոնյա կայսեր, Հռոմի Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից փախչելով, գալիս են Հայաստան: Դրանք Հռիփսիմյան կույսերն էին:

3-րդ դարի վերջում Հռոմում հիմնադրվել էր Պողոս առաքյալի անունով մի կուսանոց, որի հոգևոր ղեկավարը անվանական ծագում ունեցող Գայանե կույսը,_որը սերում էր հռոմեական թագավորական ընտանիքից, առանձնանում էր իր չքնաղ գեղեցկությամբ: Նա մերժում է Դիոկզետիանոս կայսեր կինը դառնալու

առաջարկները: Ագաթանգեղոսի վկայությամբ՝ Ս. Պողոսի կայսերը, խուսափելով կայսեր հալածանքներից, Գայանեի և երկու քահանաների գլխավորությամբ գիշերով հեռանում են մենաստանից: Նրանք նախ մենում են Եգիպտոս, իսկ այնտեղից՝ Երուսաղեմ: Նվիրական սրբությունների առաջ ուխտում են հավատարիմ մնալ իրենց հավատքին, իսկ հետո ուղևորվում են Հայաստան: Այստեղ նախ հանգրվանում են Հոգյաց վանքի կուսանոցում, այնուհետև հաստատվում Վաղարշապատի մերձակայքի հնձաններում: Դիոկզետիանոսը, տեղեկանալով կասերի Հայաստան փախչելու մասին, նամակով դիմում է Տրդատին և խնդրում գտնել նրանց և Հռիփսիմեին վերադարձնել Հռոմ: Կայսրը միաժամանակ հայոց արքային առաջարկում է ցանկության դեպքում կնության առնել գեղանի կույսին: Տրդատը, գտնելով կույսին, հմայվում է Հռիփսիմեի գեղեցկությամբ, և ինքն է ցանկանում ամուսնանալ նրա հետ, բայց նա ևս մերժում է ստանում: 301թ. թագավորի հրամանով կույսերը, դաժան չարչարանքների ենթարկվելով նահատակվում են:

Ըստ Ագաթանգեղոսի՝ Հայաստան եկած կույսերի թիվը 70-ից ավելի էր, նահատակվածներինը՝ 37: Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապից դուրս գալուց հետո կույսերի մարմիններն ամփոփում է տապաններում նրանց վրա վկայարաններ կառուցում: Հռիփսիմյաց կույսերը դասվել են սրբերի շարքը, և Հայոց եկեղեցին ամեն տարի տոնում է նրանց հիշատակը:

Ագաթանգեղոսի վկայությամբ՝ Հռիփսիմյան կույսերը նահատակությունից հետո Տրդատը որսի գնաց Փառականի եղեգնուտները, դիվոտվեց և խոզի կերպարանք առավ:

Այսքանից հետո է, որ արքայի քույր Խոսրովադուխտին տեսիլքը հայտնում է, թե Տրդատին կարող է բուժել միայն Խոր Վիրապում կալանավորված Գրիգորը: Կալանքից ազատում են նրան և նա բուժում է արքային: Ապա սրան էլ հայտնվում է տեսիլք, որը հանձնարարում է եկեղեցիներ կառուցել Միածնի իջման տեղում և Գայանեի, Հռիփսիմեի և մյուս կույսերի նահատակության վայրերում: Բուժված և քրիստոնեություն ընդունած արքան դադարեցնում է քրիստոնյաների հալածանքները: Հրաժարականի հրովարտակով 301 թվականին քրիստոնեությունը հռչակում է պետական կրոն: Այսպիսով՝ Հայաստանը դառնում է աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը:

Եկեղեցիներում նշանակվում են քահանաներ, որոնք ենթարկվում էին տվյալ նահանգի կամ գավառի եպիսկոպոսին: Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ Գրիգոր Լուսավորիչը Մեծ Հայքում Հաստատում է 36 եպիսկոպոսություններ:

Այսպիսով՝ Հայոց եկեղեցու նվիրյալ պետությունը կազմավորվեց ինքնուրույն ճանապարհով: Այն տարբերվում է քրիստոնեական այլ եկեղեցիների նվիրապետական կառույցներից:

Հայոց Արշակունի թագավորության միասնության, պետաիրավական հիմքերին ամրապնդելու գործում կարևոր դեր էր վերապահված եկեղեցական ամրակուռ համակարգի, նվիրապետության ստեղծմանը: Միասնական պետականությունը պետք է ունենար միախորհուրդ ու միակուռ նվիրապետություն, պետականորեն համակարգված գաղափարաբանություն, միաստվածական կրոն և միակենտրոն եկեղեցի: Ասվածից հասկանալի է դառնում հայոց թագավոր Տրդատ 3-ի առանձնահատուկ ուշադրությունը Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգի ստեղծման գործառույթներին:

Տրդատ 3-ը հրավիրեց հայ ավագանու ժողով, որտեղ Գրիգոր Լուսավորիչը ճանաչվեց Հայոց եկեղեցապետ: Այն, որ Հայոց եկեղեցու գլուխ կանգնեց հայրապետը Տրդատի կամքով վկայությունն է այն իրողության, որ Հայ եկեղեցին և հայրապետը պետք է ենթրակվեին թագավորին:

Քրիստոնեության ընդունման նշանակությունը

Ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում հայոց եկեղեցին առաջատար դիրքեր գրավեց հայ հասարակության մեջ: Մեհյանների կալվածքներից ու հարստություններից բացի, հողային մեծ նվիրատվություններ ստացավ Տրդատ Մեծից ու նրա հաջորդներից: Հայոց եկեղեցին վերածվեց տնտեսական հզոր ուժի:

Գրիգոր Լուսավորչի ձեռքով հայերը մկրտվեցին Արածանի գետում: Այդ օրվից ի վեր քրիստոնեությունը Հայաստանում դարձավ պետական կրոն… Հեթանոսական մեհյանների փոխարեն վեր խոյացան քրսիտոնեական տաճարները: Առաջինը մայր Աթոռ Էջմիածինն էր, որ կառուցվեց տեսիլքի համաձայն: Աստծո Միածին Որդին իջավ Վաղարշապատ և ոսկե մուրճով հարվածեց այն տեղում, ուր պետք է տաճարը կառուցվեր…

Նա ցույց տվեց Հայոց անդրանիկ Հայրապետին, թե ինչպիսին պիտի լինի այդ յուրօրինակ սրբատեղին: Ոսկեղեն մուրճի հարվածներից լույսի շողեր կաթեցին, և այդ տեղում կառուցվեց Շողակաթը: Մայր վանքի աստվածային տեսիլքը մարմնավորվեց 303թ-ին, երբ Տրդատն ինքը, մեղքերը քավելու նպատակով, կամովին բարձրացավ Արարատ լեռն ու այնտեղից հսկա քարեր իջեցրեց իր ուսերի վրա, որպեսզի Էջմիածնի վանքի հեմքն իր ձեռքոով դնի:

Ավանդույթը պատմում է, որ երբ արքան քարերն իջեցնում էր Մասիսի գագաթից Լուսավորիչն այդ ողջ ընթացքում բարձրաձայն Ավետարան էր կարդում: Հանկարծ, չգիտես ինչու, Տրդատն ասաց. «Ես այս քարերն իջեցնելուց այնքան չհոգնեցի, որքան քո անընդհատ կարդալուց»:

«Եթե կամենում ես, ես այլևս չեմ կարդա» - ասաց Լուսավորիչն ու փակեց Սուրբ Ավետարանը: Նույն պահին Տրդատը մինչև ծնկները հողի մեջ խրվեց ու քարի ծանրությունից այլևս չկարողացավ քայլել: Հասկացավ, որ ավետարանի խոսքերով և Լուսավորչի աղոթքով զորանում էր ինքը, բայց անմտորեն հարժարվել էր դրանից: Շուտափույթ ներում խնդրեց և թախանձանքով դիմեց Գրիգորին, որ շարունակի Ավետարանի զորավոր ընթերցանությունը…

Արդեն Գրիգոր Լուսավորչի օրոք հիմնականում ձևավորվեց հայ եկեղեցական կառույցը: Ստեղծվեցին 36 եպիսկոպոսություններ, որոնց գլուխ կանգնած եպիսկոպոսները եկեղեցական արարողությունների ժամանակ տեղ էին զբաղեցնում կաթողիկոսի աջ ու ձախ կողմերում: Եպիսկոպոսություններից երկուսը ստեղծված էին Վիրքի և Աղվանքի համար:

Անուրանալի է հայ քրիստոնեական եկեղեցու դերակատարությունը հայոց պատմության մեջ: Երբ Հայաստանը զրկվեց անկախ պետականությունից, Հայոց եկեղեցին իր վրա վերցրեց հայ մշակույթի պահպանման և զարգացման ծանրությունը և ազատագրական շարժումները գլխավորելու մեծ առաքելությունը….

Արշակունիների անկումից հետո Հայոց եկեղեցին միակ համազգային կազմակերպությունն էր, որ դարձել էր քաղաքակապես մասնատված Հայաստանը միավորող ուժը…

451 թվականին Ավարայրի ճակատամարտ.

Հայոց հայրապետի հարենասիրական գործունեությունը առաջ էր բերում ուրացողների զայրույթն ու ատելությունը: Նրանք Գաղիոշո Խորխոռունու գլխավորությամբ, բազմիցս զրպարտում են կաթողիկոսին պարսից արքունիքում: Հալածանքներ են սկսվում են կաթողիկոսի կողմնակիցների, հատկապես Մովսես Խորենացու դեմ…

Դարեր շարունակ այն ժողովրդին դաստիարակել է հայրենասիրության և ազգային գիտակցության ոգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարած աշխատանքից կարելի է հստակեցնել մի քանի եզրակացություն:

Այսօր կարևոր է Քրսիտոնեության դերն ու նշանակությունը, քանի որ շատ ենք հեռացել հոգևորից և աստծուց:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն է հռչակվել 301թ-ին: Այս գործում մեծ է եղել Գ. Լուսավորչի դերը, ով և համարվում է հայոց I Հայրապետ:

Այսպիսով ուսումնասիրելով նյութը հստակ կարող ենք ասել, որ քրիստոնեությունը մեծ դեր և նշանակություն է ունեցել հայ ժողովրդի լինելիության հարցում:

Այս նյութի ուսումնասիրմամբ աշակերտներն էլ ավելի են համոզվում, որ մեր տեսակի պահպանման գրավականներից մեկն էլ հավատքն է առ Աստված և քրսիտոնեական արժեհամակարգ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Քոսյան, Պարսամյան, Գյուլբուդաղյան Ա. Վ., Ղանդիլյան Վ. Ս. «Հայոց եկեղեցու պատմություն» դասագիրք, 6-րդ դասարան:
2. Բարխուդարյան Վ. Բ., գրախոս պ.գ.դ., պրոֆեսոր «Տարեգիրք», 2011թ.:
3. «Քրիստոնեական Հայաստան» ամսագիր 2017թ. հրատ.